



Բասիլայել Պատկանյան

Էգոուց

Ինձ մի՛ տանջիլ, մի՛ չարչարիլ, սիրական,
Լոկ խոստումներդ իմ սրբոտին չեն բավական.
Բոց աչքերդ ու շուրթերդ վարդանման
Երջանկություն խոստանում են հավիտյան:

Քեզ տեսնելիս, ա՛խ, մոլորվում է միտքըս,
Ուժգին, ուժգին թափ է տալիս վառ սիրտըս,
Մեկ շերմաշերմ, մեկ սառ վագում է քիրտըս.
Չորությունըս հատավ ինձնից, սիրական:

«Էգոուց, Էգոուց» լրսում են քու բերանից.

Հույսըս հատավ, հատավ էսքան խաբվելից,
Քունըս փախավ, փախավ իսպառ ինձանից,
Դե՞ ես դու չար, թե՞ հրեշտակ ես աննրման:

Էլ մի՛ խաբիլ ու մի՛ խաբվիլ, անձկալիս,
Էգուցները միշտ նրման չեն հետ գալիս.

Վա՛յ թե Էգուց աղի արցունք թափելիս՝
Դու ինձ ճամփես դեպի մըթին գերեզման: